Մինչև այստեղ գրեցինք արձանագրությունները և առաջնորդների կարգը, թուղթ թողեցինք՝ մեզնից հետո եկող եպիսկոպոսներ, գրեցեք նրանց վարքը հիշատակարանի հետ միասին:

ԳԼՈՒԽ ԺԴ
ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՁՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Կգրեմ նաև Սուրբ Գեորգի մասին, թե որտեղից եկավ Հայաստան և կամ թե ինչպես գնաց Վրաստան: Ինչպես որ շատ անգամ հարցրինք Առաքել վարդապետին և նա շատ բաներ մեզ հայտնեց, այնպես էլ հարցրինք Սուրբ Գեորգի մասին: Եվ նա ասաց, թե երբ նահատակվեց Գեորգը Գամիրքում[194], և պահպանվում էր մարմինը մինչև մեծ Ներսեսի օրերը: Սա նրա մարմինը բերել տվեց և դրեց Օհանավանքում: Այդ պատճառով հավաքեց բորոտներին ու քոսոտներին երկար ժամանակ, երբ հայոց ազգի իշխանությունը տկարացավ և ընկավ այլ ազգերի ձեռքը: Սակայն Շիրակը և Կարբիի գավառը վրաց թագավորների ձեռքում էր:

Այդ ժամանակ վրաց արքայի որդին բռնվեց գոթության հիվանդությամբ, բայց բուժում չգտավ: Ապա նրան պատմեցին, թե քո իշխանության ներքո Կարբի գավառում մի վանք կա, որ կոչվում է Օհանավանք: Այնտեղ է Սուրբ Գեորգի մարմինը: Այնտեղ են հավաքված բոլոր ուրուկներն ու գոթիները և բուժում են ստանում Սուրբ Գեորգից: Արդ, որդուդ ուղարկիր այնտեղ, նա այնտեղ կառողջանա: Թագավորը այս լսեց, ուրախացավ: Մեծ պատրաստությամբ պատրաստեց իր որդուն, որպեսզի ուղարկի այնտեղ: Թագավորի կինը հակառակվեց, չէր կամենում՝ ասելով, նախ՝ թագավորի որդի է, դրա այնտեղ գնալով, երկիրը կվրդովվի, երկրորդ՝ թե ինձ համար միամոր է, գուցե մահանա, և ես աղեխարշ տոչորվեմ: Իսկ թագավորը տարակուսանքի մեջ չգիտեր ինչ անել: Ապա մտածեց մարդ ուղարկել և Սուրբ Գեորգի ոսկորները բերել:

Պատրաստեցին խելոք մարդիկ մեծ աղերսանքով և աղերսագրով, նաև սպառնալիքներով: Եվ քանի որ Էջմիածնում կաթողիկոս չկար, (ուղարկեց) Օհանավանքի եպիսկոպոսի և Կարբիի իշխանների մոտ: Դեսպանները եկան Սուրբ ուխտը և արքունի հրամանը

ցույց տվին, բայց Կարբիի իշխանները դժկամեցին և արհամարհեցին արքունի հրամանը: Իսկ նրանք անճարացած արագընթաց սուրհանդակներ ուղարկեցին թագավորի մոտ և տեղեկացրին իրականությունը: Իսկ թագավորը հավաքում է ազատների բազմաթիվ պատանիներ և ուղարկում է իբրև պատանդներ: Այդ ուղարկված պատանիների մասին ոմանք քառասուն, ոմանք երեսուն էին հաշվում, իսկ ուրիշները այսքան ու այնքան, բայց որ ճշմարիտն է, նրանք տասներկուսն էին, որ եկան Օհանավանքի դուռը: Իսկ նրանք պատանիներին պահելով այնտեղ, Սրբի մասունքներից՝ ատամներից և արյունը թողին այստեղ, ամբողջ մարմինը պատրաստեցին ուղարկել: Երկու աբեղա, չորս քահանա, ութ աշխարհականներ մարմնի հետ ուղարկեցին, ուղարկեցին նաև սիրալիր նամակ և աղերսագիր: Եվ պայմանով առաքեցին բոլոր ոսկորները:

Երբ հասան Թիֆլիս քաղաքը, լսեցին արքայորդու մահը, որի անունը Բեժո էր, իսկ թագավորի անունը՝ Դաթո: Կամեցան այնտեղից հետ դարձնել սրբին, սակայն վրաց անամոթ ազգը չկամեցավ թողնել, մինչև հայտնեն թագավորին, որովհետև նա Կածարեթում էր: Իրենք (վրացիք) եկեղեցի շինեցին ու այնտեղ դրին սրբի ոսկորները:

Թագավորը եկավ, ոչ միայն չթողեց այնտեղ դառնալ, այլև պատվիրակներին մեղադրում էր, թե դուք իմ որդուն սպանեցիք, դրա համար տեղի ունեցավ իմ որդու մահը: Եվ ծեծով արձակեց նրանց, իսկ նշխարը ուղարկեց Կածարեթի երկիրը, որ այժմ կոչվում է Չխար: Այժմ (նշխարը) այնտեղ է մինչև այսօր: Իսկ երբ պատվիրակները դատարկ վերադարձան և պատմեցին եղածը: Եվ մինչև այդ ժամանակ պատվով ընդունում էին վրաց ազատների որդիներին, այժմ նետեցին բանտ ու կապանքների մեջ և տառապեցրին նրանց, որ թերևս նրանց ծնողները բողոքելով պահանջեն իրենց որդիներին, դարձնեն նշխար, բայց չեղավ: Եվ այն մնաց Վրաստանում, իսկ վրացիների որդիները մնացին հայոց աշխարհում մինչև այսօր: